



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՅԻԱՆԱԿԻ Չորրորդ Կիրակի

13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Ս. Յակոբ Մծրմնացի	էջ 2
Ծանուցում	էջ 3

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(38.1-8)

Այն օրերուն եզեկիա թագաւոր հիւանդացաւ եւ մահուան անկողին ինկաւ: Եսայի մարգարէն, Ամոսի որդին, անոր քով եկաւ եւ ըսաւ. «Տէրը այսպէս կ'ըսէ. – Քու տանդ համար կարգադրութիւն ըրէ՝ յաջորդդ նշանակելով, որովհետեւ կեանքիդ օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»:

Եզեկիա երեսը պատին դարձուց եւ այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՛վ Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ քու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ հաճելի է քեզի»: Եւ Եզեկիա դառնօրէն լացաւ:

Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ Եզեկիային ըսէ. – Այսպէս կ'ըսէ Տէրը, քու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. “Լսեցի աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու տամ: Այլեւ Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛ այս քաղաքը, Երուսաղէմը, որ անձամբ պիտի պաշտպանեմ”: Եւ որպէսզի գիտնաս թէ Աստուած իր խոստումը պիտի կատարէ, Տէրը հետեւեալ նշանը կու տայ քեզի: Տե՛ս, քու հօրդ՝ Աքազի արեւու ժամացոյցին ստուերը տասներորդ աստիճանին վրայ ինկեր է հիմա. բայց Տէրը զայն տասը աստիճան ետ պիտի դարձրնէ»:

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն տասը աստիճան ետ գնաց:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-14)

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր, որ տիեզերքը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք՝ երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Ան շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծմէ իրեն տրուած անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօ՛ր քեզ ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը զրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ.

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ.

«Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտենական է. արդարութեամբ կ'իշխես»

Թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւրով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը, եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս: Անոնք հագուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալես զանոնք եւ հագուստի պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք.

«Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Չէ՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը ղրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (17.1-10)

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջամ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»: Յիսուս ըսաւ. «Եթէ մանանիսի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛լ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէք որ պիտի հնազանդի ձեզի»:

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. “Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր”:

Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ.

“Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել եւ խմել”:

Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար:

Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի,

ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”»:

«... երբ կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”»:

Ս. ՅԱԿՈՒԲ ՄԾԲՆԱՅԻ ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՀԱՆԸ ԳԱՌՆԻԿ Գ. Ք.

Ծնած էր Միջագետքի Մծբին քաղաքին մէջ, որ ներկայիս ծանօթ է Նուսայպին անունով. կը գտնուի Թուրքիոյ հարաւ արեւելքը եւ Սուրիոյ սահմանին կից: Ծննդեան թուականը չենք գիտեր: Ըստ Վարք Սրբոցին, յընթացս Անակ Պարթեւի գերդաստանի բնաջնջման, եւ մեր հոգիներու ապագայ լուսաւորիչ՝ փոքրիկն Գրիգորի դէպի Կեսարիա փախցուելուն ատեն՝ փոքրիկն Յակոբ եւ իբր անոր զարմիկը՝ միասին տարուած է (միայն հայկական ավանդութիւնը ցոյց կու տայ Գրիգորի եւ Յակոբի ազգականական կապը, մինչդեռ ասորական ավանդութիւնը այդ մասին որեւէ ակնարկութիւն չունի: Հայկական ավանդութեան մէջ Գրիգորի եւ Յակոբի մերձաւորութեան արձանագրութիւնը՝ սին հպարտութիւն մը չէ, ըստ իս, այլ իրականութեան մը թելադրութիւնը կ'ընէ):

Օրմանեան սրբազան Գրիգորի ծննդեան թուականը 239 նշած է: Արդեօ՞ք Յակոբն ալ 3-րդ դարու երեսունականներուն ծնած էր: Նաեւ հետաքրքրական է, որ ասորական աւանդութիւնը երբեք չի խօսիր փոքրիկն Յակոբի եւ իր ծնողքին ի Հայաստան կեցութեան մասին, եւ ոչ ալ Կեսարիոյ մէջ կրթութեան եւ ուսման մասին:

Բարձր ուսման հռչակ մը կապուած է իր անունին: Վարք Սրբոցը Կեսարիայէ անոր վերադարձը շատ կանուխ կը դնէ, հետեւաբար ուսումնառութիւնը Կեսարիոյ մէջ չէ եղած: Թէ ո՞ւր առած է իր ուսումը՝ Աստուած գիտէ:

Ճգնական կեանքի հովը այդ օրերուն նոր ծագած էր, եւ յեղափոխական զօրաւոր շարժումի մը պէս էր: Յակոբ կը հրաժարի ազնուական շրջանակի շուայտ մթնոլորտէն եւ ճգնաւոր կը դառնայ ու իր ժամանակը կ'անցընէ ծոմապահութեամբ եւ աղօթքով: Անոր ճգնութեան վայրերը լեռներն ու անտառներն էին:

Ճգնական կեանքը անոր համար պատրաստութեան հանգրուան մը կ'ըլլայ: Յայսմաւուրքը կ'ըսէ, թէ այն ատեն Աստուծմէ կը ստանայ «չնորհս զօրաւոր գործոց եւ հոգի նախագիտութեան», այսինքն՝ ի վերուստ կ'օժտուի հրաշագործելու եւ մարգարէանալու կարողութեամբ: Ապա կը նուիրուի Քրիստոսի Աւետարանին տարածման: Այնքան կը հռչակուի անունը, որ 308 թուականին կը կոչուի Մծբինի եպիսկոպոսական ծառայութեան, եւ նոր յանձնառութեամբ եւ առաւել իշխանութեամբ սքանչելի գործունէութիւն մը կը ծաւալէ. թէ՛ քարոզչական, թէ՛ ուսուցողական եւ թէ՛ ընկերային:

Աստուածաշունչին մէջ կը կարգանք, թէ Նոյեան տապանը ջրհեղեղի վախճանին Արարատի լեռներուն վրայ կը նստի (Ծն 8.4): Ասոր հետեւելով՝ Նոյեան տապանը հանգչած տեսնուած է Մեծ Մասիսին վրայ: Սակայն Աստուածաշնչական ժամանակներուն Արարատ անունը երկիր մը կը նշէր եւ ոչ թէ մեզի ծանօթ երկրագաթ լեռը: «Արարատ»ը «ՐՐՏ» անունին մէկ այլ ընթերցումն էր: Գիտենք, որ «ՐՐՏ» անունը պատմութեան մէջ առհասարակ «Ուրարտու» կարգացուած է:

Արդ, ուրկէ՞ է, որ ծագած է Յակոբ Հայրապետի Մասիսն ի վեր բարձրանալու աւանդութիւնը:

Ինչպէս ակնարկեցի, սուրբը իրեն ճգնութեան վայր ունէր նաեւ լեռները: Մծբինի մերձակայ լեռները՝ Կորդուքի կամ Կորդուաց աշխարհի լեռներն էին: Տիգրիսի հարաւային կողմը կային Մասիուսի լեռները. ասոնք մեր այսօրուան Արարատին Մասիսները չէին: Արարատի Մասիսները Մծբինէն

շատ հեռու՝ հիւսիս արեւելեան եւ Արաքս գետին մօտ են: Հետեւաբար, Յակոբ ճգնաւորի Մասիուսեան լեռներուն վրայ հոգեկրթութեան հանգրուանը բանաւոր աւանդութեամբ պիտի փոխուէր, եւ վերածուէր Մեծ Մասիսն ի վեր Հայրապետի բարձանալու աւանդավէպին: Հաւանաբար՝ ուշ քան 12-րդ դարը: Ներսէս Ծնորհալի, որ Ս. Յակոբին նուիրուած շատ գեղեցիկ շարական մը գրած է, այդ մասին նուազագոյն ակնարկութիւն մը չունի:

Այս ենթադրութիւնս կը հիմնաւորուի մեր մատենագրութեան հնագոյն աղբիւրներէն՝ Փաւստոս Բիւզանդի «Պատմութիւն Հայոց»ով, ուր առաջին անգամ կը հանդիպինք այն աւանդավէպին, թէ Հայրապետը իր ծերունի հասակին շատ կը փափաքի Նոյի շինած փրկութեան տապանը տեսնել: Եւ կը բարձրանայ Կորդուք գաւառի մէկ լեռը, որ Սարարագ կոչուած է (ասիկա Արարատին հետ չչփոթել):

Այս աւանդավէպը հաւանաբար յետ միջնադարուն պիտի հայոց սրբազան լեռը փոխադրուէր եւ օծուէր հաւատքի ու յարատեւութեան գաղափարներով: Աւետիս Ահարոնեանի «Իմ Գիրքը» հատորին մէջ՝ ա'յդ է, որ պահուած է: Չվերապատմեմ Ահարոնեանի դրուագը, գիտե՛ս, կամ գնա՛ եւ անպայման կարդա՛, որովհետեւ գոյապայքարի մեր ճիգին համար՝ ներշնչումի հզօր աղբիւր է անիկա: Հաւատք ու յարատեւութիւն՝ ելքի ուրիշ ճար չկայ մեզի:

Ս. Յակոբ Հայրապետ նաեւ ճանչցուած է իբր Նիկիոյ Տիգրեական ժողովին (325) մեծ ներգրում ունեցած ղէմքերէն մէկը:

Իր անունով հաւատախօսական, բարոյախօսական եւ ջատագովական գիրք մը կայ Հայ թարգմանական գրականութեան մէջ: Անունն է «Զգօն»: Թէեւ բանասիրութեան մէջ կարծիքներ կան, թէ անիկա Ս. Յակոբի գրիչէն չէ, այլ Ափրատ Ասորիի: Սակայն սուրբի վարքագրութեան մէջ առհասարակ «Զգօն»ը իրեն վերագրուած է:

Վախճանած է 338-ին:

Ս. Յակոբ Մծբնացիի աւանդավէպին մէջ կը պատմուի, թէ անոր աղօթքէն՝ երկու լեռներու ստորոտին աղբիւրներ բխած են:

Հաւատքի եւ յարատեւութեան կենդանի աղբիւրը աղօթքն է.

անիկա

կը վերանորոգէ եւ արժանի կը դարձնէ մագլցելու դէպի փրկութեան շնորհը.

անիկա

կը վերանորոգէ եւ արժանի կը դարձնէ մագլցելու դէպի արդարութեան շնորհը:

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք

Ս. ՅԱՎՈՐ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԱԽՍ
Մայր ԵԿԵՂԵՅՈՂ տո՛ր ԿԱՅՔԷՁՈ՛՝
www.sourphagop.net

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Ց

Ա Մ Ա Ն Ո Ր

ԱՌԱՓՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ
Ուրբաթ, 1 Յունուար 2010,
Առաւօտեան ժամը 11.00–ին:

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Երեքշաբթի, 5 Յունուար 2010,
Երեկոյեան ժամը 5.00–ին:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Երեկոյեան ժամը 6.30–ին:
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

ԱՐԺ. Տ. ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.
ԳՈՅՈՒՆԵԱՆ
(ՀՈՎԻԻ)

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ
ԿԸ ԿԱՏԱՐԵՆ՝

Գոյունեան Մաշտոց, Խշիշեան Բաֆֆի,
Ալեմեան Մանուկ, Դաւիթեան Բաֆֆի, Մալոյեան
Սասուն, Թորոսեան Լեօնարտո, Իսրայիլեան
Ալինա, Յարութիւնեան Մելիսա, Իսրայիլեան
Լինէթ, Տեմիրճեան Ռուպինա, Քիլլիսեան
Սերենա, Դաւիթեան Սերժ, Գլոնճեան Դալար,
Գոյունեան Կորին, Պապիկեան Առէն,
Պարթեւեան Արամ, Պանքեան Սիեր, Պարթեւեան
Ճէսիքա, Պապիկեան Սեակ, Պարթեւեան
Լիսա:

ՏՕՆ ԾԱՆԴԵԱՆ

ՅԻՄՈՒՄ ԲՐԻԱՏՈՒՄ

Չորեքշաբթի, 6 Յունուար 2010

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Առաւօտեան ժամը 9.30

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Առաւօտեան ժամը 11.00

ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

ԵՒ

ԿԸ ԶԱՐՈՉԷ

ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս.
ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(ՀՈԳԵԻՈՐ ՏԵՍՈՒՉ)

ՀՈՎԻԻԸ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Անոնք որ կը փափաքին
հովիւին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն: